



ԳՐԱՆՇԱՆ 2017

Անցակացման վայրն ու ժամկետը՝

ԵՐԵՎԱՆ 02.10. 2017 – 07.10.2017

ԱՊՐԵՑՆՈՂ ՏԱՌԵՐ

Անցակացման ժամկետները՝

Շրջագայություն Հայաստանի պատմամշակութային

վայրերով՝ 02.10.17 – 04.10.17

«Գրանշան» ոչ լատինական տառատեսակների հոբեյանական 10-րդ միջազգային մրցույթի անցկացվացում՝ հոկտեմբերի 4-ից 5-ը

«Գրանշան» ոչ լատինական տառատեսակների 6-րդ միջազգային համաժողովի անցկացում՝ 05.10.17 – 07.10.17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տառարվեստի նկատմամբ հետաքրքրությունն օրեցօր մեծանում է, քանի որ տառերը ոչ միայն գրավոր տեսքով տեղեկատվության փոխանակման միջոց են դիտվում, այլև արդի դիզայնի կարևոր բաղադրիչներից մեկն են: 2008 թվականից ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ անցկացվող տառատեսակների «Գրանշան» մրցույթները ցույց տվեցին, որ բոլոր ոչ լատինական այբբենական համակարգերում առկա են խնդիրներ, որոնք բնականաբար լուծման կարիք ունեն: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ մեր օրերում անցկացվող տառատեսակների մրցույթներն ու համաժողովները հիմնականում վերաբերում են լատինական տառատեսակներին, իսկ մյուս այբբենական համակարգերը մնում են ստվերում: Միևնույն ժամանակ արդի տառատեսակներն անհնար է պատկերացնել առանց լատինական մասի, հետևաբար ամեն մի տառաստեղծ, նոր տառատեսակ նախագծելով, այսպես թե այնպես նպաստում է նաև լատինական տառարվեստի զարգացմանը: Այս ամենը նկատի ունենալով՝ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ 2012 թվականի հունիսի 14–16-ը Երևանում անցկացվեց ոչ լատինական տառատեսակների խնդիրներին նվիրված առաջին «Գրանշան» վերտառությամբ համաժողովը:

Համաժողովը մեծ արձագանք գտավ տառաստեղծման ոլորտի մասնագետների մոտ և «Գրանշանի» կազմկոմիտեն որոշեց համաժողովները նույնպես դարձնել ամենամյա:

Երևանի համաժողովին հաջորդեցին Բանգկոկում, Մյունխենում, Ռեդինգում և Կահիրեում անցկացված «Գրանշան» համաժողովները: Այսօր «Գրանշան» վերտառությամբ մրցույթները, համաժողովներն ու ցուցահանդեսները թիվ մեկ միջոցառումներն են աշխարհում, որոնք ուղղված են ոչ լատինական այբբենական համակարգերին:

Մենք գնահատում ու կարևորում ենք յուրաքանչյուր այբուբենի առանձնահատկություններն ու պատրաստ ենք ամեն կերպ աջակցել ցանկացած այբբենական համակարգի հետագա զարգացմանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. «Գրանշան» ոչ լատինական տառատեսակների հոբեյանական 10-րդ միջազգային մրցույթի անցկացում ու արդյունքների ամփոփում

2. «Գրանշան» ոչ լատինական տառատեսակների 6-րդ միջազգային համաժողովի, ցուցահանդեսների ու վարպետության դասընթացների (Workshop) նպատակները`
 - 2.1. Նպաստել «Գրանշան» միջոցառումների հետագա ճանաչմանն ու վարկանիշի բարձրացմանը,
 - 2.2. Նպաստել Հայաստանում տառատեսակների շուկայի ձևավորմանն ու կայացմանը,
 - 2.3. Քննարկել ոչ լատինական այբբենական համակարգերի հարցերն ու առաջարկել դրանք լուծելու տարբերակները,
 - 2.4. Նպաստել գեղագրության զարգացմանը Հայաստանում,
 - 2.5. Բարձրացնել հայ դիզայներների որակավորումը տառատեսակների ընտրության ու գործածման առումով արդի դիզայնի պահանջներին համապատասխան,
 - 2.6. Ցուցադրել երիտասարդ տառաստեղծների ու գեղագիրների աշխատանքներն ու նպաստել այդ ոլորտներում սերնդափոխության կայացմանը
 - 2.7. Նպաստել տուրիզմի զարգացմանն ու ծանոթացնել հյուրերին Հայաստանի պատմամշակութային վայրերին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԳՐԱՆՇԱՆ 2017» ՈՉ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ

10-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

Անցկանցման ժամկետը՝ հոկտեմբերի 4-ից 5-ը

Այս տարի կանցկացվի թվով 10-րդ՝ հոբելյանական մրցույթը: Նախորդ տարիների ընթացքում ավելացնելով մրցութային անվանակարգերն ու տարածման աշխարհագրությունը, «ԳՐԱՆՇԱՆ» ապացուցեց իր արդիականությունն ու կարևորությունը և այսօր իրավամբ համարվում է տառարվեստի զարգացմանն ուղղված ամենահեղինակավոր միջոցառումներից մեկն աշխարհում: 2016 թվականից այն արմատապես ձևափոխեց իր անվանակարգային ձևաչափն ու այսօր ներկայացվում է 3 գլխավոր անվանակարգերով՝

1. Առաջին հիմնական անվանակարգ՝ ոչ լատինական

Այս անվանակարգը բացառապես ոչ լատինական լեզվական համակարգերի համար է և ընդգրկում է հետևյալ բաժինները

- **Տեքստային տառատեսակներ**

- **Վերնագրային տառատեսակներ**

- **Ազատ ոճի տառատեսակներ**

Մասնակիցները կարող են ներկայացնել տառատեսակներ հետևյալ այբբենական համակարգերում՝

- Արաբական
- Հայկական
- Չինական ավանդական և պարզեցված
- Կիրիլյան
- Հունական
- Եբրայական
- Հնդկական
- Կորեական
- Թաիլանդական
- Այլ լեզվական համակարգ՝ որպես ազատ ոճի տառատեսակներ

2. Երկրորդ հիմնական անվանակարգ՝ ոչ լատինական – լատինական

Անվանակարգը այն տառատեսակների համար է, որոնք նախագծվել են լատինական և որևէ ոչ լատինական այբուբենների համադրությամբ և նախատեսված են համակցված օգտագործման համար: Եթե առկա են մի քանի ոչ լատինական բաղադրիչներ, յուրաքանչյուր համադրություն պետք է ներկայացվի առանձին: Գնահատման գործընթացի ժամանակ մրցութային հանձնաժողովը առաջին հերթին հաշվի է առնում տառատեսակի ոչ լատինական մասի որակը, այնուհետև նույն չափանիշներով գնահատվում են ներկայացված լատինական գրանշանները և վերջնական արդյունքում գնահատվում է համակցման որակը: Նման համակարգի կարևորությունը կայանում է նրանում, որ հաճախ տեքստերում հարկ է լինում բացի հիմնական ազգային լեզվի տառերից գործածել նաև լատինական գրանշաններ՝ մեջբերումների կամ հղումների համար:

3. Երրորդ հիմնական անվանակարգ՝ ոչ լատինական 2 և ավելի լեզվական համակարգեր

Անվանակարգը նախատեսված է այն տառատեսակների համար, որոնք ունեն առնվազն երկու ոչ լատինական բաղադրիչներ և որոնք նախատեսված են միասին գործածելու համար՝ առանց լատինական համակարգի: Աշխատանքները գնահատելիս ուշադրություն է դարձվում նախ յուրաքանչյուր այբբենական

համակարգի որակին առանձին, իսկ այնուհետև ներկայացված լեզվական համակարգերի համադրությանը: Այս անվանակարգում լատինական տառատեսակները չեն դիտարկվում: Մրցութային հանձնաժողովում ընդգրկված են աշխարհում մեծ հեղինակություն ունեցող անվանի մասնագետներ «Գրանշանի» բոլոր լեզվական համակարգերի համար:

«Գրանշան 2017» մրցութային հանձնաժողովի կազմը

Համանախագահներ՝

Էդիկ Ղաբուզյան, ՀՀ

Բորիս Կոխան, Գերմանիա

Մրցութային հանձնաժողովի անդամներ՝

Ջերրի Լեոնիդաս, Միացյալ Թագավորություն

Ֆիոնա Ռոսս, Միացյալ Թագավորություն

Լիու ժաո, Չինաստան

Անժելա Պողոսովա, ՀՀ

Հայթհամ Նավար, Եգիպտոս

Ադի Ստերն, Իսրայել

Ալեքսեյ Վանյաշին, Ռուսաստան

Անուֆին Վոնգունգակոնկ, Թայլանդ

Չանգ Սիկ Քիմ, ԱՄՆ

Փորձագետներ

Քանի որ մրցութային հանձնաժողովի անդամները չունեն նեղ մասնագիտական կարողություններ միաժամանակ բոլոր անվանակարգերի համար, անվանակարգերի բոլոր աշխատանքները ուղարկվում են համապատասխան մասնագետ-փորձագետների, ովքեր քննարկումից հետո յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ իրենց մեկնաբանություններն ու կարծիքներն ուղարկում են կազմկոմիտեի համանախագահ Էդիկ Ղաբուզյանին և մրցանակակիր աշխատանքները ընտրելիս մրցութային հանձնաժողովի անդամները հաշվի են առնում փորձագետների կարծիքները:

• Հայկական տեքստային տառատեսակներ

Վահան Բալասանյան, Գարիկ Մարտիրոսյան, Ռուբեն Մալայան:

• **Արաբական տեքստային տառատեսակներ**

Քամալ Մանսուր, Բահիա Շեհաբ, Մոհամեդ Հասան:

• **Չինական տեքստային տառատեսակներ**

Մին Վանգ, Կուրտ Հուանգ, Ժիվեյ Ժու:

• **Հունական տեքստային տառատեսակներ**

Ջոն Հուդսոն, Կլիմիս Մաստորիդիս, Իռեն Վլաչու:

• **Կիրիլյան տեքստային տառատեսակներ**

Եվգենի Յուկիչև, Բուսլջո Նիկոլտչև, Դմիտրի Կիրսանով:

• **Հնդկական տեքստային տառատեսակներ**

Ռավի Պուվիահ, Ռաֆնա Ռամանաթան, Գրահամ Շոու:

• **Հրեական տեքստային տառատեսակներ**

Լիրոն Լավի, Անատ Կատզիր, Եհուդա Հոֆշիր:

• **Կորեական տեքստային տառատեսակներ**

Յու Սունգ Քիմ, Յոնգ-մի Յու, Սեոնգ Յաե Սոնգ :

Երևան հրավիրվել են միայն հիմնական հանձնաժողովի անդամները:

Էքսպերտները կարող են ժամանել ընդհանուր հիմունքներով:

«ԳՐԱՆՇԱՆ 2017» ՈՉ ԼԱՏԻՆԱԿԱՆ ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ

6-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Անցկանցման ժամկետը՝ հոկտեմբերի 5-ից 7-ը

Սկսած 2012 թվականից համաժողովում ներկայացվում են ոչ լատինական տառատեսակների պատմությունը, զարգացումն ու առկա խնդիրներն ու առաջարկվում դրանց լուծման տարբերակներ:

Օրակարգ

05.10.17

15.00 – 15.30 Գրանցում

15.30 – 16.00 Ողջույնի խոսք համաժողովի կազմակերպիչների կողմից Էդիկ Ղաբուզյան, Բորիս Կոխան, Ջերի Լեոնիդաս

- 16.00 – 16.11 Ողջույնի խոսք (Արմեն Ամիրյանի, մշակույթի նախարար)
- 16.11 – 16.23 Ողջույնի խոսք (Գայանե Խասոյան)
- 16.23 – 16.35 Ողջույնի խոսք (Մարի Լու Փափազյան, ԹՈՒՄՈ տնօրեն)
- 16.35 – 17.15 Հիմնական ելույթ Էդիկ Ղաբուզյան
- 17.15 – 18.00 Սուրճի ընդմիջում // Մամուլի ասուլիս
- 18.00 – 18.15 Անժելա Պողոսովա, Գրանշանի պատմություն
- 18.15 – 18.50 ԳՐԱՆՇԱՆ 2017 մրցույթի հաղթողների հայտարարում, հատկապես հայկական հաղթողները Էդիկ Ղաբուզյանի և Բորիս Կոխանի կողմից
- 18.50 – 19.50 Գեղագրության ցուցադրում ԳՐԱՆՇԱՆ-ի 10-րդ հորեյանի առիթով Քհանգ Բյունգ Ինի, Ռուբեն Մալայանի հետ, ղեկավար Չանգ Սիկ Կիմ
- 19.50 – 21.00 Ընդմիջում
- 21.00 – 00.00 Պաշտոնական ընթրիք խոսնակների և հրավիրված հյուրերի համար

6.10.2017

- 10.00 – 10.30 Գրանցում
- 10.30 – 11.00 Ողջույնի խոսք, Բորիս Կոխան
- 11.00 – 11.45 Հիմնական ելույթ, Ջերի Լեոնիդաս
- 11.45 – 12.15 Ելույթ, Չանգ Սիկ Կիմ
- 12.15 – 12.45 **Ընդմիջում**
- 12.45 – 13.15 Ելույթ, Լիու ժաո
- 13.15 – 13.45 Ելույթ, Ավրահամ Քորնֆելդ
- 13.45 – 14.45 Ճաշի ընդմիջում
- 14.45 – 16.20 Քննարկում Կիրիլյան տառատեսակների մասին

Կիրիլյան տառատեսակ 1: Ալեքսեյ Վանյաշին, Ռուսաստան
(Ընդհանուր ներկայացում)

Կիրիլյան տառատեսակ 2: Տոդոր Վարջիև, Բուլղարիա

Կիրիլյան տառատեսակ 3: Կիրիլ Տկաչով, Ուկրաինա

Կիրիլյան տառատեսակ 4: Իյա Ռուդերման, Ռուսաստան

Քննարկում

16.20 – 16.50 Ընդմիջում

16.50 – 17.20 Ելույթ, Հայթհամ Նավար

17.20 – 17.50 Ելույթ, Նեժդեհ Հովհաննիսյան

17.50 – 18.20 Ընդմիջում

18.20 – 19.05 Հիմնական ելույթ, Ֆիոնա Ռոսս

19.05 – 19.20 Փակման խոսք, Բորիս Կոխան

7.10.201

10.00 – 10.30 Գրանցում

10.30 – 11.00 Ողջույնի խոսք, Բորիս Կոխան

11.00 – 11.45 Հիմնական ելույթ, Ադի Ստերն

11.45 – 12.15 Ելույթ, Սյուզան Զիփել – գրային համակարգի գաղափարախոսությունը

12.15 – 12.45 Ընդմիջում

12.45 – 13:15 Ելույթ, Քարոլին Պուզովիո

13:15 – 13.45 Ելույթ, Գիգա Խատիաշվիլի

13.45 – 14:45 Ճաշի ընդմիջում

14:45 – 16.00 Հայկական տառատեսակների քննարկում

Հայկական տառատեսակ 1: Ռուբեն Մալայան – գեղագրության մասին

Հայկական տառատեսակ 2: Դավիթ Ղազարյան (Մատենադարան)

Հայկական տառատեսակ 3: Տիգրան Սոսոյան

Հայկական տառատեսակ 4: Վարդգես Քեչիշյան – հայկական գրատպության պատմություն

16.00 – 16:30 Ընդմիջում

16:30 – 17:00 Ելույթ, Հրանտ Փափազյան

17:00 – 17:30 Ելույթ, Խաժակ Ապելյան

17:30 – 18:00 Անցած տարիների ԳՐԱՆՇԱՆ մրցույթի հայկական հաղթողներ:

Կլոր սեղանի քննարկում Հրանտ Փափազյանի և Խաժակ Ապեյանի գլխավորությամբ:

Հրաչուհի Գրիգորյան

Մարիետա Արզումանյան

Նվարդ Իսկաջյան

Սյուզի Հակոբյան

18:00 – 18:30 **Ընդմիջում**

18:30 – 19:15 Հիմնական ելույթ, Փոլ Ջեոմբո Սեոկ

19:15 – 19:40 Փակման խոսքեր համաժողովի կազմակերպիչների կողմից Էդիկ Ղաբուզյան, Բորիս Կոխան, Ջերի Լեոնիդաս

21:00 – 00:00 Համաժողովի խնջույք

Բացման արարողությունից հետո կհայտարարվեն «Գրանշան» մրցույթի հաղթողները:

Համաժողովի ընթացքում նախատեսվում է պարզևատրել հայ և այլազգի այն մասնագետներին, ովքեր մեծ ներդրում են ունեցել «Գրանշան» միջոցառումների կայացմանը:

Համաժողովի նիստերը կանցկացվեն «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների սրահներում:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Անցկանցման ժամկետը՝ սեպտեմբերի 2-ից հոկտեմբերի 7-ը

Համաժողովին զուգընթաց կանցկացվեն մի շարք ցուցահանդեսներ, այդ թվում՝

1. «ԳՐԱՆՇԱՆ» 2016 մրցույթի մրցանակակիր աշխատանքներ
2. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի և Պոլիտեխնիկական համալսարանի ուսանողների մշակած տառատեսակներ,
3. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի ու «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողների գեղագրության աշխատանքներ

Ցուցահանդեսները կանցկացվեն «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների սրահներում:

ԳԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՈՒ

Անցկանցման ժամկետը՝ հոկտեմբերի 5-ը

Նախատեսվում է ցուցադրել գեղագրություն 3x5 մ պաստառի վրա կորեացի հանրահայտ գեղագիր Քհանգ Բյունգ Ինի և հայաստանցի Ռուբեն Մալայանի միաժամանակյա գեղագրություն նույն պաստառի վրա հայերեն և կորեերեն լեզուներով: Միջոցառումը կանցկացվի «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների նախասրահում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ (WORKSHOP, MASTER CLASS)

Անցկանցման ժամկետը՝ հոկտեմբերի 2-ից 7-ը

Հայաստանցի դիզայներների և «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողների հետ կանցկացվեն աշխատանքային հանդիպումներ և տառատեսակների մշակման և կիրառման դասընթացներ:

ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հոկտեմբերի 2-ին՝ այցելություն Մատենադարան, Էրեբունի, Գեղարդ,

2. Հոկտեմբերի 3-ին՝ այցելություն Տառերի հովիտ և Օշական,

10.00 Մեկնում Երևանից

13.30 Ճաշ

17.00 Վերադարձ Երևան

3. Հոկտեմբերի 4-ին՝ այցելություն Սևանի կղզի, Հաղարծին, Հաղպատ

10.00 Մեկնում Երևանից

13.30 Ճաշ

17.00 Վերադարձ Երևան

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Կազմակերպիչներ՝ Էդիկ Ղաբուզյան, Բորիս Կոխան, Ջերի Լեոնիդաս, Անժելա Պողոսովա, Հրաչուհի Գրիգորյան, Լիանա Շուշանյան, Արամ Գյումիշյան, Շուշան Փարեմուզյան (ԹՈՒՄՈ):

Տեխնիկական սարքերի պատասխանատու՝ Հայդար Ալտինտաս՝ Գերմանիա,

Լուսանկարիչ Կատարինա Զեյդլ:

Միջոցառումների ընթացքում աշխատանքների կազմակերպման և անցկացման ժամանակ օգնելու պատրաստակամություն են հայտնել Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի թվով 7 ուսանող: